թեամբ ազգաց և ազանց մէջ խաղաղ ու խաղաղական կը լինին և բարձրելոյն անուն յիշեալներս կը նուազեցնեն... «ԱՀ և ինչ պիտի լինի երբ Տէրը նը կատարու սկսի» (Ակէլէ։) Ուրեմն կամ արժանաւոր լինիմք մեր պաշտօնին և կամ թողուցնք այնպիսի պաշտօն մը որուն անարժան ենք, չը լինինք հետամուտ այնպիսի գործոյ մը որ մեր կարողութենէն վեր է։

Արդ կարծեմ այս չափով կրցի հասկացնել որ եկեղեցւոյ պաշտօնէից համար ազգէս լինելը ամօթ է, մեղք է և մեծ վնաս թէ իրենց անձին և թէ իրենց շրջակայքը. հերիք սեպենք ուրեմն այս չափը և քիչ մ՚ալ խօսինք եկեղեցւոյ պաշտօնէից անպարծութեանը վրայ կարծ՚ի կարծոյ։

(Շրոնոգրէլ։)

ՄԱՀԱԳՈՅԺ

Յուսք սրտի իմացանք Ամենասիրելի Տ. Տ. Պօղոս Արբասան Արքեպիսկոպոսին Օմիւռնիոյ բարեխնամ Առաջնորդին մահը, զոր գուժած էր Արշալոյս։

Նորին Արբասնութիւնը իբրեւ Հայաստանեայց ուրբ Եկեղեցւոյ պաշտօնեայ՝ անբասիր կեանք մի ունեցած է, ՚ի կրօնս ոչքամիտ և ՚ի վարս անբամբասելի զանազան տեսչական պաշտօնավարութեանց մէջ ալ հասարակաց համակրութիւնը գրաւած էր, ինչպէս Արմաշու վանուց վանահայրութեան և այսչափ ժամանակ Օմիւռնիոյ պէս քաղաքի մը առաջնորդական ծանր պաշտամանց մէջ, որ ապացոյց է անշուշտ իւր խոհականութեան, ծանրութեան և քաղաքագիտութեան։

Հանգուցեալ Ս. Հոր գովելի յատկութիւններն և իւր հանրածանօթ պարկեշտ կենաց համբաւն էր անշուշտ՝ որ առանց իւր հետամուտ լինելուն, և առանց իսկ հրաժարականն ընդունելու կոչուեցաւ յաթոռ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ, յորմէ ապա հրաժարելով Օմիւռնիոյ հասարակութիւնն ընդունեց զինքն իբրև որդեսէր Հայր, որոյ հովանւոյն տակ երկար ատեն պաշտպանուած էր և այս վերջին անգամ ևս վայելեց Նորին Հայրութեան գգուանքներուն հետ նորա օրհնութիւններն ալ։

Նորին Արբասնութեան վնասաբեր մահը որչափ մեղ և ընդհանուր Ազգին, հարկաւ աւելի վիշտ է և կարեւոր ցաւ սրտի իւր խնամոց յանձնուած հօտին, որոց ՚ի մխիթարութիւն կը մաղթենք որ Աստուած տայ իրենց այնպիսի առաջնորդ մի, որ իւր՝ խոհեմ, գործունեայ, հաւատարիմ, և ոչքամիտ ու ոչքախոհ կենաց մուտքնէ նոցա սրտին ցաւը։

ՀԱՐՑՈՒՄ

Ազգային լրագիրներէն կիմանամք, որ կրօնամոլ Յոյնք կրկնամկրտութիւնն բաւական չը համարելով՝ կրկնամանութեան ևս սկսած են։ Արդ՝ կը հարցնենք թէ՝ ուր են արդեօք երբեմն Սիոնն դատափետող Միաբարներն։

ԱՌԱԿ

ՄՈՒԿՆ ԴԱՇՏԻ ԵՒ ՄՇԱԿ

Ով չը գիտեր մկան չարիք բազմադիմի
Ոչ՚ի վեր է քան ղհասակ իւր չբոտի։

digitised by A.R.A.R.@